միայն ծառայում էին վանքին եւ կոչւում էին «տիրամօր մղդսիքէ: Նրանց ապրուստի աղբիւրը վանքն էր :

Առանց ցաւելու չէր կարելի նայել, երբ մի ամբողջ գիւղի ողորմելի բազմութիւնը նոիրել էր իրան միայն վանքի սպասաւորութեանը, դառնալով կոյր գործիք նրա միաբանութեան ձեռքում: Տիրամօր «մղդսին» գրագէտ մարդ չէ: Բայց նա գիտէ աւետարանից ամբողջ գլուխներ, երգում է շարականներ, կարդում է եկեղեցական ընթերցանութիւններ, երբ նա, առած իր հետ վանքի սրբութիւններից մէկը, ման է գալիս գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, մտնում է ամէն ջերմեռանդ հայի տուն, վանքի սրբութիւնը բաց է անում, մաղթանք է կատարում, համբուրել է տալիս եւ ողորմութիւն է հաւաքում:

Տիրամօր «մղդսիների» մուրացիկ թափառականները կարելի էր տեսնել ամէն տեղ: Ես դեռ յիշում եմ, երբ նրանք մեր տունն էին գալիս, բաց էին անում վանքի «սուրբ նշանը» — նա լինում էր՝ կամ մի խաչ, կամ մի որեւիցէ սուրբի մարմնի մասունքը, — որը դնում էին մաղի վրայ, նրա չորս կողմից ձեռքով բռնում էին, եւ սկսում էին զանազան բաներ կարդալ: Մայրս ինձ, Մարիամին եւ Մագթաղին նստեցնում էր մաղի տակ, որի վրայ դրած էր «սուրբ նշանը»: Այդ անում էր այն մտքով, որ մաղի ծակերից «սուրբ նշանիէ օրհնութիւնը թափուէր մեր գլխին: Յետոյ նրանք «խաչալոայ» էին անում, մեր երեսին օրհնած ջուր էին քսում, եւ շատ ուրիշ բաներ էին անում, որ այժմ մոռացել եմ...: Մայրս փող չէր ունենում, բայց դարձեալ տիրամօր մղդսիներին առանց մի բան տալու ճանապարհ չէր գցում. նա կտրում էր իր պարանոցի կամ գլխի զարդերից մի արծաթ եւ տալիս էր նրանց:

Վարդապետները վանքի սրբութիւնները տալիս էին մղդսիներին, ժողովրդի մէջ ման ածելու, զանազան պայմաններով՝ երբեմն վարձով, երբեմն կապալով, իսկ երբեմն այն դաշամբ, որ հաւաքած գումարի մի մասը տային վանքին, միւս մասը իրանք մղդսիքը վեր առնէին:

Բայց քիչ չէր պատահում, որ մղդսիները, օգուտ քաղելով ժողովրդի միամտութիւնից եւ նրա սնահաւատութիւնից, դէպի չարն էին գործ դնում վանքի հաւատարմութիւնը: Նրանցից շատերն ունէին իրանց տներում խաչեր եւ կեղծ, հնարած «սուրբ նշաններ» — դրանց ման էին ածում վանքի սրբութիւնների անունով:

Սուրբ տիրամօր հրաշագործութիւնը, զանազան բորոտութիւններ, խոցեր ու այլ փոխանցիկ հիւանդութիւններ բժշկելու մասին, ամէն տեղ հռչակուած լինելով, ամէն կողմից բերում Էին նրա վանքը այսպիսի ախտաւորներին: Նրանք մնում էին այնտեղ տարիներով, ի հարկէ, քչերին էր յաջողւում առողջանալով իրանց տունը վերադառնալ, իսկ մեծ մասը անխնամ մնալով,